ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ

2024 թ. սեպտեմբերի 13-ի թիվ 1 նիստի

Գիտխորհրդի նախագահ Ն. Մարտիրոսյանն առաջարկեց հաստատել նիստի օրակարգը: Բաց քվեարկությամբ ներկաները միաձայն կողմ քվեարկեցին:

ԼՍԵՑԻՆ.- Դեկան Ն. Մարտիրոսյանի հաղորդումը Ժուռնալիստիկայի ֆակուլտետի բակալավրիատի և մագիստրատուրայի 2024/2025 ուստարվա ընդունելության մասին:

Դեկան Ն. Մարտիրոսյանը նշեց, որ այս տարի բակալավրիատի 1-ին կուրս ընդունվել է 46 ուսանող (որոնցից մեկը՝ արտոնությամբ, 4 անվճար, 41 վճարովի): Մագիստրատուրա ընդունվել է 12 ուսանող (6 անվճար, 6 վճարովի):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- *Լ. Կ. Սայադյան, Ն. Է. Վարդանյան, Ա. Ռ. Մենեմշյան:*

ՈՐՈՇԵՑԻՆ- Ն. Մարտիրոսյանի հաղորդումն ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ.- BBC Media Action-ի հետ համագործակցության մասին Ն Մարտիրոսյանի հաղորդումը:

Ն. Մարտիրոսյանը ներկայացրեց BBC Media Action-ի հետ համագործակցության ընթացքը՝ նշելով, որ 2024թ. ամռանը տեղի են ունեցել վերապատրաստման երկու դասընթացներ դասախոսների համար, իսկ 3-րդը կանցկացվի սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 2-ը: Դեկանը տեղեկացրեց, որ ծրագրի շրջանակներում ֆակուլտետի 12 լավագույն ուսանողներ պրակտիկա են անցնելու BBC Media Action-ի հայաստանյան գործընկեր լրատվամիջոցներում՝ ստանալով կրթաթոշակ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Դ. Վ. Պետրոսյան, Ա. Ռ. Մենեմշյան, Զ. Զ. Սարգսյան, Ք. Ա. Ալազուլյան:

ՈՐՈՇԵՑԻՆ. – Ն. Մարտիրոսյանի հաղորդումն ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ.- Պրոֆեսորի օգնականի հաստատման հարցը:

Խորհրդի նախագահ Ն. Մարտիրոսյանը առաջարկեց պրոֆեսորի օգնական (հասարակական հիմունքներով) հաստատել Նոր մեդիայի և հաղորդակցության ամբիոնի հեռակա ասպիրանտ Լիանա Մարտիրոսյանին՝ հիմք ընդունելով նույն ամբիոնի միջնորդություն-երաշխավորությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- *Դ. Վ. Պետրոսյան, Լ. Կ. Սայադյան, Ա. Ռ. Մենեմշյան:*

Գիտխորհրդի նախագահ Ն. Մարտիրոսյանն առաջարկեց անցկացնել բաց քվեարկություն: Խորհուրդը միաձայն կողմ քվեարկեց Լ. Մարտիրոսյանի թեկնածությանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաշվի առնելով քվեարկության արդյունքները՝ Նոր մեդիայի և հաղորդակցության ամբիոնի հեռակա ասպիրանտ Լիանա Ներսեսի Մարտիրոսյանին

նշանակել պրոֆեսորի՝ հասարակական հիմունքներով օգնական մինչև ընթացիկ կիսամյակի ավարտը:

ԼՍԵՑԻՆ.- Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների հաստատման մասին Դ. Պետրոսյանի և Գ. Աբրահամյանի հաղորդումները:

Ամբիոնի վարիչները տեղեկացրին, որ արդեն ի մի են բերվել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաները: Նշվեց, որ ամբիոնները հետևելու են ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պատրաստման ընթացքին: Գ. Աբրահամյանն առաջարկեց հնարավորություն տալ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամներին մինչև պաշտպանություն ծանոթանալու ավարտական աշխատանքներին: Այս հանգամանքը կօգնի, որ վերջիններս ավելի հեշտ կողմնորոշվեն գնահատելիս:

Դ. Պետրոսյանը հայտնեց, որ այս տարի ևս 4-րդ կուրսում նախատեսում է անցկացնել ուսանողական գիտաժողով՝ ավարտական աշխատանքների թեմաներով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- *Ն. Ն. Մարտիրոսյան, Լ. Կ. Սայադյան, Ն. Է. Վարդանյան, Ա. Ռ. Մենեմշյան:*

Գիտխորհրդի նախագահ Ն. Մարտիրոսյանն առաջարկեց հաստատել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաները:

Խորհուրդը միաձայն կողմ քվեարկեց:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաշվի առնելով քվեարկության արդյունքները՝ հաստատել 2024/25 ուստարվա ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաները:

ԼՍԵՑԻՆ.- Ն. Մարտիրոսյանի առաջարկը անվանական կրթաթոշակների հավակնորդների թեկնածությունների հաստատման վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- *Ն. Ն. Մարտիրոսյան, Դ. Վ. Պետրոսյան, Մ. Մ. Կարապետյան, Ա. Ռ. Մենեմշյան:*

Անցկացվեց բաց քվեարկություն: Խորհուրդը միաձայն «կողմ» քվեարկեց բոլոր հավակնորդներին:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաշվի առնելով քվեարկության արդյունքները՝ երաշխավորել բակալավրիատի առկա ուսուցման 3-րդ կուրսի ուսանողուհի Էմմա Անդրանիկի Վարդանյանին 2024 թ. սեպտեմբերի 1-ից ստանալու **«Հարություն քահանա Շմավոնյան»** կրթաթոշակը, բակալավրիատի առկա ուսուցման 4-րդ կուրսի ուսանողուհի Ժաննա Մերուժանի Բեքիրյանին՝ 2024 թ. սեպտեմբերի 1-ից ստանալու **«Արտաշես Քալանթարյան»** կրթաթոշակը, իսկ բակալավրիատի առկա ուսուցման 3-րդ կուրսի ուսանողուհի Մարինե Էդգարի Զոհրաբյանին՝ 2024 թ. սեպտեմբերի 1-ից ստանալու **«Հովհաննես Աղասյան»** կրթաթոշակը:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ Ն. Ն. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Զ. Զ. ՍԱՐԳՍՅԱՆ